ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.09.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/151

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Էյ Դի Վի Մեդիա Էս» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝

Ս. Հարությունյանի (լիազորագիր տրված՝ 08.08.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.09.2019թ. թիվ 26/26-1/14887-2019 գրությամբ «Էյ Դի Վի Մեդիա Էս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 04.09.2019թ. թիվ 1/18-2/52985-2019 գրության հիման վրա 06.09.2019թ. թիվ 26/26-1/14887-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Էյ Դի Վի Մեդիա Էս» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Էյ Դի Վի Մեդիա Էս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Էյ Դի Վի Մեդիա Էս» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

Տվյալ դեպքում «Էյ Դի Վի Մեդիա Էս» ՍՊԸ–ին Օրենքի 6-րդ հողվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որևէ հիմքի առկայություն (այդ թվում նաև «ա» ենթակետի), առկա չէ, քանի որ մասնակիցը տվյալ դեպքում ի սկզբանե գնման գործրնթացի շրջանակում չի ստանձնել որևէ պարտավորություն, որը խախտվել է, կամ թույլ չի տվել պայմանագրով նախատեսված որևէ պարտավորության խախտում, կամ չի հրաժարվել գնման գործընթացին հետագա մասնակցությունից, ինչպես նաև չի հրաժարվել պայմանագիր կնքելուց: ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար կազմակերպված ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/28 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում «Էյ Դի Վի Մեդիա Էս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը չեն համապատասխանել հրավերի պահանջներին: Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի՝ 27.08.2019թ-ին «Էյ Դի Վի Մեդիա Էս» ՍՊԸ-ին ծանուցվել է ներկայացնել որակավորման շտկված փաստաթղթերը: Սահմանված ժամկետում շտկված

փաստաթղթերը չեն ներկայացվել և կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն հայտը մերժվել է:

Այսինքն՝ «Էյ Դի Վի Մեդիա Էս» ՍՊԸ-ի կողմից որակավորման շտկված փաստաթղթերը չներկայացնելը հիմք է հայտը մերժելու, այլ ոչ թե՝ ցուցակում ներառելու համար: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 23-րդ կետը սահմանում է, որ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումն, պայմանագրի կատարումը և կառավարումն: Գնման գործընթացին մասնակցելը, որը սկսվում է մասնակցի կողմից հայտ ներկայացնելու պահից, հանդիսանում է մասնակցի իրավունքը: Միևնույն ժամանակ մասնակիցը գնման գործընթացի շրջանակներում ստանձնում է որոշակի պարտականություններ, որոնք ծագում են որոշակի փուլից հետո: Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Էյ Դի Վի Մեդիա Էս» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկված փաստաթղթերը չեն ներկայացվել հիմք է հայտը մերժելու, համաձայն Օրենքի վերը նշված հոդվածի, և չի հանդիսանում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմք, ուստի գտնում են, որ «Էյ Դի Վի Մեդիա Էս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն: Ելնելով վերոգրյալից Ընկերությունը խնդրել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին «Էյ Դի Վի Մեդիա Էս» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

«Էյ Դի Վի Մեդիա Էս» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/151 ընթացակարգի շրջանակներում 13.09.2019թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. **<u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 04.09.2019թ. թիվ 1/18-2/52985-2019 գրությամբ ներկայացրել է «Էյ Դի Վի Մեդիա Էս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը և հայտնել է հետևյալը.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար կազմակերպված ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/28 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում «Էյ Դի Վի Մեդիա Էս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը չեն համապատասխանել հրավերի պահանջներին: Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» N 526-Ն որոշման 47-րդ կետի՝ 27.08.2019թ-ին «Էյ Դի Վի Մեդիա Էս» ՍՊԸ-ին ծանուցվել է ներկայացնել որակավորման շտկված փաստաթղթերը: Սահմանված ժամկետում շտկված փաստաթղթերը չեն ներկայացվել և կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն հայտը մերժվել է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/151 ընթացակարգի շրջանակներում 13.09.2019թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. **<u>ՍՑ-ՆԳ-2019/151 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ՆԳ-2019/151 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմակերպվել է ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/28 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էյ Դի Վի Մեդիա Էս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.08.2019թ. նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Էյ Դի Վի

Մեդիա Էս» ՍՊԸ-ն, որին ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու հրավերով պահանջվող փաստաթղթերը, միաժամանակ հիմք ընդունելով Կարգի 66-րդ կետը՝ առաջարկվել է ներկայացնել լրացուցիչ տեղեկություն այն մասին, թե որ հեռուսատաալիքով են ցուցադրվելու ֆիլմերը՝ Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի 3-րդ կետով սահմանված պահանջներին հեռուսատաալիքի համապատասխանությունը ստուգելու նպատակով:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.08.2019թ. նիստի թիվ 7 արձանագրությամբ կայացված որոշմամբ արձանագրվել է, որ Ընկերության կողմից ներկայացված փաստաղթղերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես՝ ներկայացված չէ Ընթացակարգի հրավերի հավելված 3-ը, փաստաթղթերը ներկայացված են ոչ լիարժեք և չեն համապատասխանում հրավերի 2.5 կետին, ներկայացված չէ նաև Արձանագրություն 6-ի 3-րդ կետի «դ» ենթակետով պահանջվող տեղեկատվությունը:

4. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 47-րդ և 48-րդ կետերի պահանջները ծանուցել է Ընկերությանը երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու շտկված փաստաթղթերը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 03.09.2019թ. նիստի թիվ 8 արձանագրությամբ կայացված որոշմամբ, հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից չեն ներկայացվել պահանջվող որակավորման շտկված փաստաթղթերը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 06.09.2019թ. թիվ 26/26-1/14887-2019 գրությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 04.09.2019թ. թիվ 1/18-2/52985-2019 գրությունը և կից փաստաթղթերը, «Էյ Դի Վի Մեդիա Էս» ՍՊԸ-ի դիրքորոշումը, գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը,

պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Նույն օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերի:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն .զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով

«ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Կարգի 47-րդ և 48-րդ կետերի համաձայն՝

47. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

48. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 66-րդ կետի համաձայն՝ մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր:

Այսպիսով, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմակերպվել է ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/28 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էյ Դի Վի Մեդիա Էս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.08.2019թ. նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Էյ Դի Վի Մեդիա Էս» ՍՊԸ-ն, որին ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու հրավերով պահանջվող փաստաթղթերը, միաժամանակ հիմք ընդունելով Կարգի 66-րդ կետը՝ առաջարկվել է ներկայացնել լրացուցիչ տեղեկություն այն մասին, թե որ հեռուսատաալիքով են ցուցադրվելու ֆիլմերը՝ Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի 3-րդ կետով սահմանված պահանջներին հեռուսատաալիքի համապատասխանությունը ստուգելու նպատակով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.08.2019թ. նիստի թիվ 7 արձանագրությամբ կայացված որոշմամբ արձանագրվել է, որ Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես՝ ներկայացված չէ Ընթացակարգի հրավերի հավելված 3-ը, փաստաթղթերը ներկայացված են ոչ լիարժեք և չեն համապատասխանում հրավերի 2.5 կետին, ներկայացված չէ նաև Արձանագրություն 6-ի 3-րդ կետի «դ» ենթակետով պահանջվող տեղեկատվությունը:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 47-րդ և 48-րդ կետերի պահանջները ծանուցել է Ընկերությանը երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու շտկված փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 03.09.2019թ. նիստի թիվ 8 արձանագրությամբ կայացված որոշմամբ, հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ

ենթակետը, մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից չեն ներկայացվել պահանջվող որակավորման շտկված փաստաթղթերը:

Այսպիսով, Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ ***առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերը*** չներկայացվելու կամ ***ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ,*** ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում ***հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը***: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ***<u>առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝ չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:</u>***

Հաշվի առնելով այն փաստական հանգամանքը, որ Ընկերությունը Կարգի 47-րդ կետով սահմանված պահանջի համաձայն՝ ծանուցվելով չի շտկել առկա անհամապատասխանությունները, ուստի գտնում եմ, որ նման պայմաններում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, առաջնորդվելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներով, մերժելով Ընկերության հայտը գործել է իրավաչափ:

Ինչ վերաբերվում է Ընկերության կողմից 12.09.2019թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ, ինչպես նաև ՍՑ-ՆԳ-2019/151 ընթացակարգի շրջանակներում 13.09.2019թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստի շրջանակներում հայտնած այն պնդմանը, որ «Էյ Դի Վի Մեդիա Էս» ՍՊԸ-ի կողմից որակավորման շտկված փաստաթղթերը չներկայացնելը հիմք է Ընկերության հայտը մերժելու, այլ ոչ թե՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար, ապա սույն մասով անհրաժեշտ եմ համարում արձանագրել, որ Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետով սահմանվում է, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ ***<u>առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում</u>՝*** բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերի:

Այսպիսով՝ Կարգը հստակ սահմանում է, որ եթե առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Իսկ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Վերոհիշյալ նորմերը հստակ սահմանում են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտման հիմքը:

Այսպիսով՝ գտնում եմ, որ «Էյ Դի Վի Մեդիա Էս» ՍՊԸ-ն «ՀՀՊԵԿ-ԳՀԾՁԲ-19/28» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում խախտել է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է Ընկերության՝ Ընթացակարգին մասնակցության հետագա դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.09.2019թ. թիվ 26/26-1/14887-2019 գրությամբ «Էյ Դի Վի Մեդիա Էս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Էյ Դի Վի Մեդիա Էս» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**